Հաստատված է

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ամբիոնի . .2019թ. նիստում (արձ. թիվ)

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի

ակադեմիայի պետի ուսումնական

աշխատանքների գծով տեղակալ,

ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության գնդապետ

Մ. Մուրադյան

. . 2019թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		ՀՀ քաղաքացիական դատավարություն
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ մասնաշենք/սենյակ հեռախոս էլ. հասցե Web կայքի հասցե		Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոն
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Գ.Վարդանյան
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		3-րդ կուրս, 2-րդ կիսամյակ

ԿՐԵԴԻՏՆԵՐ		
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ		«ՀՀ Քաղաքացիական դատավարության» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 64 ժամ, որից 32 դասախոսություն, 20 սեմինար, 12 գործնական, ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը մեկ անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում եզրափակիչ գնահատմամբ՝ քննությամբ:
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ		Դասընթացը կառուցվում է «ՀՀ սահմանադրական իրավունք» «Քաղաքացիական իրավունք», դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		
ՆՊԱՏԱԿ		Դասընթացի նպատակը կայանում է նրանում, որպեսզի ուսանողները յուրացնեն սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության տարբեր ձևերը /հայցային վարույթը, հատուկ հայցային և հատուկ վարույթները/ կարգավորող իրավունքի նորմերի նշանակությունը, հասարակության մեջ քաղաքացիական դատավարության աճող դերը բոլոր քաղաքացիների՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի, քաղաքացիական գործերը դատարանների կողմից քննելու և լուծելու, ինչպես նաև նոտարական գործողություններ կատարելու կարգը, իրավունքի նորմերի անխզելի կապը համապատասխան մարմինների կողմից նրանց գործնական կիրառման հետ:
ԽՆԴԻՐ/ՆԵՐ		Դասընթացի խնդիրներն են հանդիսանում. 1. Իրավունքի համակարգում քաղաքացիական դատավարության իրավունքի տեղի և դերի որոշումը 2. Իրավունքի անհրաժեշտ աղբյուրներին ծանոթանալը 3. Դատավարական փաստաթղթեր կազմելու ունակության պատրաստելը 4. Դատավարության տարբեր սուբյեկտների դերի, իրավունքների, պարտականությունների և կոնկրետ գործնեության մասին հստակ պատկերացում տալը
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ		

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ Իմանա՝		ա) հայց հարուցելու կարգը և այն չպահպանելու հետևանքները բ) գործի քննության կարգը առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գ) հատուկ հացային վարույթների գործերի քննության դատավարական առանձնահատկությունները դ) հատուկ վարույթի գործերի քննության դատավարական առանձնահատկությունները ե) դատական ակտերի վերանայումը վերաքննության և վճռաբեկության կարգով զ)դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով ը) օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի վարույթը
Կարողանա՝		ա) բնութագրել հայցային գործերով քաղ. գործի հարուցումը դատարանում բ) վերլուծել նախնական դատական նիստի նշանակությունը գ) բացահայտել գործի քննության կարգը դատական համակարգում դ) դասակարգել հատուկ հայցային վարույթի գործերի քննության դատավարական առանձնահատկությունները ե) բացահայտել վերաքննության վարույթի սկզբունքները զ) վերլուծել դատական ակտերի վերանայումը վերաքննության ու վճռաբեկության կարգով է) բնութագրել վճիռների և որոշումների վերանայումը նոր հանգամանքներով ը) բացահայտել օտարերկրյա քաղաքացիների և կազմակերպությունների իրավական վիճակը քաղաքացիական դատավարությունում
Տիրապետի՝		ա)հայցային վարույթին բ) հատուկ հայցային վարույթին գ) հատուկ վարույթին դ)վարույթը վերաքննիչ դատարանում ե) վարույթը վճռաբեկ դատարանում զ) կատարողական վարույթին է) արտասահմանյան քաղաքացիական դատավարությանը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Ռ. Գ. Պետրոսյան, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Եր., 2007 2. Ս. Գ. Մեղրյան, Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում: Դասախոսություններ, Եր., 2011 3. Ռ. Գ. Պետրոսյան, Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում, Եր., 2001 4. Գ. Մուրադյան, ՀՀ վճռաբեկ դատարանը հանրային իշխանության համակարգում և «դատական նախադեպը». Սեմինար-քննարկումների նյութերի ժողովածու, Եր., 2007 5. Վ. Վ. Հովհաննիսյան, Քաղաքացիական գործերով դատական վերանայման ինստիտուտի զարգացման հիմնախնդիրները Հայաստանում, Եր., 2011, 6. Ռ. Գ. Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, Եր., 2013 7. Ս. Գ. Մեղրյան, Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., 2010 8. Ա. Հ. Դավթյան, Քաղաքացիական դատավարություն, Եր., 2007
Լրացուցիչ		1. Трешников М. К. Судебные доказательства. М., 2004, 2. Алиев Т. Т. Производство по пересмотру судебных постановлений ввиду вновь открывшихся обстоятельств в гражданском судопроизводстве: теоретические и практические аспекты, перспективы развития. Дис. … док. юрид. наук. Саратов, 2005 3. Морозова Л. С. Пересмотр решений по вновь открывшимся обстоятельствам. М., 1959 4. Гражданское процессуальное право России¦: Учебник для вузов /Под ред. М. С. Шакарян, М., 1998, 5. Завриев С. С. Пересмотр по вновь открывшимся обстоятельствам решений, определений, постановлений президиума суда надзорной инстанции, вступивших в законную силу, в гражданском процессе. Дис. … канд. юрид. наук. М., 2008 6. Осокина Г. Л. Курс гражданского судопроизводства России. Общая часть. Учебное пособие. Томск, 2002, 7. Решетникова И. В. Доказывание в гражданском процессе. М., 2010 8. Коршунов Н. М., МареевЮ. Л. Гражданский процесс. Учебник для вузов. М., 2004

		9. Жилин Г. А. Апелляция и кассация в гражданском прцессе // "Современная доктрина гражданского, арбитражного процесса". Материалы международной конференции. Краснодар, 2004 10. Жуйков В. М. Судебная защита прав граждан и юридических лиц. М., 1997 11. Кейлин А. Д. Судоустройство и гражданский процесс капиталистических государств. Ч. 2. М., 1958 12. Борисова А. Е. Апелляция в гражданском (арбитражном) процессе (изд. второе, исправленное и дополненное). М., 2000 13. Коршунов Н. М., Мареев Ю. Л. Гражданский процесс. Учебник для вузов. М., 2004 14. Мельников А. А. и др. Курс советского гражданского процессуального права. М., 1981 15. Васьковский Е. В. Курс гражданского процесса. Субъекты и объекты процесса, процессуальные отношения и действия. Т. 1, М., 1913

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		Քննություն (քննված, չքննված)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Ուսանողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% առաջադիմություն:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ներկայություն		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:
		Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:

Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր: Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

Թեմա 12 **Նախնական դատական նիստ** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Նախնական դատական նիստի նշանակությունը և խնդիրները: 2. Նախնական դատական նիստում դատավարական գործողությունների ծավալը և բովանդակությունը: 3. Նախնական դատական նիստը և այդ նիստում գործի վարույթն ավարտելը: 4. Գործը դատական քննության նշանակելը: Դատական ծանուցագրեր: 5. Արտասահմանում գտնվող քաղաքացիների և կազմակերպությունների ծանուցման առանձնահատկությունները:	Հարցեր 1-5- անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-5– սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում, հետադարձ կապի միջոցով ներկայացված նյութի յուրացման ստուգում, դիմումների կազմում: Ինքնուրույն աշխատանք. Ուսանողները ինքնուրույն դիմումներ են կազմում, ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:

Թեմա 13 **Դատական քննություն** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դատական քննության փուլի հասկացությունը և նշանակությունը: 2. Գործի քննության կարգը առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում: 3. Դատական նիստի բաղկացուցիչ մասերը: 4. Գործի քննության հետաձգումը: 5. Գործի վարույթի կասեցումը: 6. Գործի վարույթն ավարտելը՝ առանց վճիռ կայացնելու:	Հարցեր 1-6 - կարդացվում է դասախոսություն, ներկայացվում է սխեմատիկ պատկեր: Հարցեր 1-6- Սեմինար պարապմունք: Ստուգվում են ընթացիկ առաջադրանք-ները և նյութի ընկալման աստիճանը, տրվում են ստուգիչ հարցեր, կատարվում է նյութի ամփոփում, կազմվում են վճիռներ: Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:

Թեմա 14 **Արագացված դատաքննություն** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Արագացված դատաքննության հասկացությունը և նշանակությունը: 2. Արագացված դատաքննության հարուցումը և գործն ըստ էության լուծումը:	Հարցեր 1-2- Անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Տրվում են հարցեր քննարկման համար, մեկնաբանվում են պատասխանները: Հարցեր 1-2 – սեմինար պարապմունք, հանձնարարված առաջադրանքների ստուգում, խնդրահարույց հարցերի քննարկում:

Թեմա 15 **Հատուկ հայցային վարույթի գործերի քննության առանձնահատկությունները** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Հատուկ հայցային գործերի իրավական բնութագիրը և այդ գործերի տեսակները: 2. Ընտանեկան գործեր: 3. Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործեր: 4. Առանձին աշխատանքային վեճերով գործեր: 5. Կորպորատիվ վեճերով գործեր: 6. խմբային հայցի հիման վրա քննվող գործեր: 7. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի և անվճարունակ բանկի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների ժամանակավոր ադմինիստրացիայի որոշումների բողոքարկման վարույթ: 8. Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ գործերը:	Հարցեր 1-8 - անցկացվում է դասախոսություն : Հարցեր 1-8- անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով): Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, տրվում են թեստային առաջադրանքներ: Ինքնուրույն աշխատանք. Ուսանողնե-ը ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրա-հարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի ժամանակ:

Թեմա 16 Հատուկ վարույթի գործերի քննության դատավարական առանձնահատկությունները (6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 4 ժամ գործնական)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հատուկ վարույթի հասկացությունը: 2. Իրավաբանական նշանակություն ունեցող	Հարցեր 1-12- անցկացվում է դասախոսություն ձևով, որտեղ

փաստերի հաստատման գործերի վարույթ: 3. Շարժական գույքը տիրազուրկ ճանաչելու և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելը: 4. Անչափահասին լրիվ գործունակ ճանաչելը /էմանսիպացիա/: 5. Քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու վերաբերյալ գործերը: 6. Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելը կամ քաղաքացուն մահացած հայտարարելը: 7. Երեխայի որդեգրելը: 8. Անձին հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացնելը: 9. Քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և բուժման ենթարկելը; 10. Ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթերով հավաստված իրավունքները վերականգնելը /կոչի վարույթ/: 11. Հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վարույթ: 12. Արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելը:	առանձնակի ուշադրություն է դարձվում ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին: Հարցեր 1-12 – անցկացվում է սեմինար պարապմունք: Սովորողը ծանոթանում է դիմումներ կազմելու ձևերին, նախապատրաստվում է սեմինարին դասախոսի նախապես հանձնարարված համապատասխան մասնագիտական գրականություն ուսումնասիրելով: Տրվում են գործնական հանձնարարություններ դիմումներ կազմելու համար:

Թեմա 17 **Հաշտարարություն** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հաշտարարության ծագումը, հաշտարարության իրականացման կարգը, սկզբունքները հաշտության համաձայնությունը հաստատելը: 2. Դատարանի կողմից դատական և արտադատական հաշտության համաձայնությունը վարույթ ընդունելը և հաստատելը:	Հարցեր 1-2-անցկացվում է դասախոսություն: Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են հանձնարարված գրականությանը, վեր հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են հաջորդ դասախոսության և սեմինար պարապմունքի ժամանակ: Հարցեր 1-2- անցկացվում է սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի

	քննարկմամբ: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են սեմինար պարապմունքի ժամանակ:

Թեմա 18 **Վարույթը վերաքննիչ դատարանում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դատական վճիռների վերաքննիչ բողոքարկման ինստիտուտի ծագումն ու զարգացումը: 2. Վերաքննիչ վարույթի հասկացությունը, սկզբունքները և տեսակները: 3. Վերաքննիչ բողոքարկման իրավունքը և դրա իրականացման կարգը: 4. Գործի քննությունը վերաքննիչ դատարանում: 5. Վերաքննիչ դատարանի վճիռը /որոշումը/ դրա օրինական ուժը: 6. Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկումը վերաքննության կարգով:	Հարցեր 1-6- անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ներկայացվում է սխեմատիկ պատկերներ: Ուսանողները նախօրոք ծանոթանում են ներկայացված թեմայի հիմնադրույթներին և խնդրահարույց հարցերը ներկայացնում քննարկման: Հարցեր 1-6 – սեմինար պարապմունք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը, իրավական ակտերին և քննարկում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերը, ընթերցվում են վերաքննիչ դատարանի վճիռներ: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: Գործնական պարապմունքի ժամանակ կազմում են վերաքննիչ դատարանի վճիռներ:

Թեմա 19 **Վարույթը վճռաբեկ դատարանում** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Վճռաբեկ վարույթի ծագումն ու զարգացումը: 2. Վճռաբեկ վարույթի հասկացությունը:	Հարցեր 1-5 - անցկացվում է դասախոսություն: Ուսանողին տրվում է

3. Վճռաբեկ վարույթի հարուցումը և գործերի քննության դատավարական կարգը: 4. Վճռաբեկ դատարանի լիազորությունները և դատական ակտերը վճռաբեկության կարգով բեկանելու հիմքերը: 5. Վճռաբեկ դատարանի որոշումները:	համապատասխան նյութը: Ներկայացվում է սխեմատիկ պատկերներ վճռաբեկ վարույթի վերաբերյալ: Հարցեր 1-5 - անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման ձևով: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, հետադարձ կապի միջոցով նյութի ընկալման աստիճանը, տրվում են ստուգիչ և ամփոփիչ հարցեր:

Թեմա 20 **Դատական ակտը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթ** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հասկացությունը: Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերը: Վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք: Բողոքի բովանդակությունը և վարույթի հարուցումը: 2. Դատական ակտերը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայող դատարանը: Վերանայման ժամկետը և կարգը:	Հարցեր 1-2 - անցկացվում է դասախոսություն: Ուսանողին տրվում է համապատասխան նյութը: Հարցեր 1-2 - անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման ձևով: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, հետադարձ կապի միջոցով նյութի ընկալման աստիճանը, տրվում են ստուգիչ և ամփոփիչ հարցեր:

Թեմա 21 **Դատական ակտերի հարկադիր կատարման վարույթ** **(Կատարողական վարույթ)** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման**

	մեթոդաբանություն
1. Կատարողական վարույթի հասկացությունը և էությունը: 2. Կատարողական վարույթի մասնակիցները: 3. Կատարողական թերթ: 4. Կատարողական վարույթի ընդհանուր կանոնները: 5. Կատարողական գործողություններ: 6. Կատարողական ծախսեր: 7. Բռնագանձված գումարները պահանջատերերի միջև բաշխելը: 8. Պատասխանատվությունը կատարողական վարույթի ընթացքում թույլ տված խախտումների համար:	Հարցեր 1-8 - անցկացվում է դասախոսություն: Ուսանողին տրվում է համապատասխան նյութը: Հարցեր 1-8 - անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման ձևով: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմվում է կատարողական թերթիկ, տրվում են ստուգիչ և ամփոփիչ հարցեր:

Թեմա 22 **Օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի վարույթ** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Օտարերկրյա անձանց քաղաքացիական դատավարական իրավունքները և պարտականությունները: 2. Օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի ընդդատությունը: 3. Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դեմ հարուցվող հայցեր: 4. Միջազգային համագործակցությունը քաղաքացիական դատավարության ոլորտում: 5. Օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը: 6. Օտարերկրյա արբիտրաժի վճիռների ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը:	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն: Ուսանողին տրվում է համապատասխան նյութը: Հարցեր 1-6 - անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման ձևով: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, հետադարձ կապի միջոցով նյութի ընկալման աստիճանը, տրվում են ստուգիչ և ամփոփիչ հարցեր:

Հարցաշար

ՀՀ ոստիկանության ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա վճարովի ուսուցման բակալավրիատի 3-րդ կուրսում դասավանդվող ՀՀ քաղաքացիական դատավարություն առարկայի քննության

1. Նախնական դատական նիստի նշանակությունը և խնդիրները:
2. Նախնական դատական նիստում դատավարական գործողությունների ծավալը և բովանդակությունը:
3. Նախնական դատական նիստը և այդ նիստում գործի վարույթն ավարտելը:
4. Գործը դատական քննության նշանակելը: Դատական ծանուցագրեր:
5. Արտասահմանում գտնվող քաղաքացիների և կազմակերպությունների ծանուցման առանձնահատկությունները:
6. Դատական քննության փուլի հասկացությունը և նշանակությունը:
7. Գործի քննության կարգը առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում:
8. Դատական նիստի բաղկացուցիչ մասերը:
9. Գործի քննության հետաձգումը:
10. Գործի վարույթի կասեցումը:
11. Գործի վարույթն ավարտելը՝ առանց վճիռ կայացնելու:
12. Արագացված դատաքննության հասկացությունը և նշանակությունը:
13. Արագացված դատաքննության հարուցումը և գործն ըստ էության լուծումը:
14. Հատուկ հայցային գործերի իրավական բնութագիրը և այդ գործերի տեսակները:
15. Ընտանեկան գործերը:
16. Հայաստանի Հանրապետություն անօրինական տեղափոխված կամ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ գործերը:
17. Առանձին աշխատանքային վեճերով գործերը:
18. Կորպորատիվ վեճերով գործերը:
19. Խմբային հայցի հիման վրա քննվող գործերը:
20. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի և անվճարունակ բանկի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների ժամանակավոր ադմինիստրացիայի որոշումների բողոքարկման վարույթ:

21. Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ գործերը:
22. Հատուկ վարույթի հասկացությունը:
23. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերի վարույթը:
24. Շարժական գույքը տիրազուրկ ճանաչելու և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ գործերը:
25. Անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (էմանսիպացիա) գործերը:
26. Քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու վերաբերյալ գործերը:
27. Քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու գործերը:
28. Երեխայի որդեգրման վերաբերյալ գործերը:
29. Անձին հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ գործերը:
30. Քաղաքացուն բժշկական հարկադիր հետազոտության և (կամ) բուժման ենթարկելու վերաբերյալ գործեր:
31. Ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթերով հավաստված իրավունքները վերականգնելու վերաբերյալ գործերը /կոչի վարույթ/:
32. Հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վերաբերյալ գործերը:
33. Արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վերաբերյալ գործերը:
34. Հաշտարարության ծագումը, հաշտարարության իրականացման կարգը, սկզբունքները, հաշտության համաձայնությունը հաստատելը:
35. Դատարանի կողմից դատական և արտադատական հաշտության համաձայնությունը վարույթ ընդունելը և հաստատելը:
36. Դատական վճիռների վերաքննիչ բողոքարկման ինստիտուտի ծագումն ու զարգացումը:
37. Վերաքննիչ վարույթի հասկացությունը, սկզբունքները և տեսակները:
38. Վերաքննիչ բողոքարկման իրավունքը և դրա իրականացման կարգը:

39. Գործի քննությունը վերաքննիչ դատարանում:
40. Վերաքննիչ դատարանի վճիռը /որոշումը/ դրա օրինական ուժը:
41. Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկումը վերաքննության կարգով:
42. Վճռաբեկ վարույթի ծագումն ու զարգացումը:
43. Վճռաբեկ վարույթի հասկացությունը:
44. Վճռաբեկ վարույթի հարուցումը և գործերի քննության դատավարական կարգը:
45. Վճռաբեկ դատարանի լիազորությունները և դատական ակտերը վճռաբեկության կարգով բեկանելու հիմքերը:
46. Վճռաբեկ դատարանի որոշումները:
47. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հասկացությունը:
48. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման հիմքերը:
49. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք:
50. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով բողոքի բովանդակությունը և վարույթի հարուցումը:
51. Դատական ակտերը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայող դատարանը: Վերանայման ժամկետը և կարգը:
52. Կատարողական վարույթի հասկացությունը և էությունը:
53. Կատարողական վարույթի մասնակիցները:
54. Կատարողական թերթ:
55. Կատարողական վարույթի ընդհանուր կանոնները:
56. Կատարողական գործողություններ:
57. Կատարողական ծախսեր:
58. Բռնագանձված գումարները պահանջատերերի միջև բաշխելը:
59. Պատասխանատվությունը կատարողական վարույթի ընթացքում թույլ տված խախտումների համար:
60. Օտարերկրյա անձանց քաղաքացիական դատավարական իրավունքները և պարտականությունները:
61. Օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի ընդդատությունը:

62. Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դեմ հարուցվող հայցեր:
63. Միջազգային համագործակցությունը քաղաքացիական դատավարության ոլորտում:
64. Օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը:
65. Օտարերկրյա արբիտրաժի վճիռների ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը:

Կազմեց դասախոս՝ Գ. Վարդանյանը

Քննարկվել և հաստատվել է

«Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության»

ամբիոնի նիստում «30» «05» 2018թ.

Արձանագրություն № 7

Ակադեմիայի պետի տեղակալ,

ոստ գնդապետ՝ Մ. Մուրադյան